

Ըս կերպով ամբողջացած բնագիրը կրնայ մինակ Պատարագի ատեն եւ յերախայացուցման գործածուիլ, հաւատացելոց առանձնական գործածութեանը չզպչելով :

Բայց որպէս զի ասով շատ երկնցած չըլլայ հանգանակը, ուրիշ կողմանէ կրնայ ծար ըլլալ :

Ու երոյիշեալ Հրահանգին մէջ Սուրբ Ժողովը յիշեալ Նախագահին քանի մը հարցմանցը պատասխան տալով՝ առ երրորդն ասանկ կը պատասխանէ. (Հանգանակին վերջը) «Արիանտաց եւ Մակեդոնեանց դէմ՝ նզով քը եթէ մինակ հանդիսական պատարագի մէջ ըսուի, բաւական է,» :

Սակայն եւ այնպէս, սովորութիւն եղած է որ նոյն նզով քը գրեթէ որ եւ իցէ պատարագի մէջ ամէն քահանայք ըսեն : Բայց Աշխիփանու յառաջ բերած ձեւերուն առաջնէն՝ կը տեսնենք որ Ա-Պոլսի ըսուած հանգանակն ալ ի սկզբանէ ի վերջոյ իր նզով քն (ընդդէմ Արիանտաց) ունեցած է, սակայն նոյն Ա-Պոլսի ժողովոյն ըրածին համեմատ՝ թէ յոյն եւ թէ լատին եկեղեցին նոյն նզով քը պատարագի մէջ երբեք չի գործածեր : Ուստի եթէ մենք ալ անոնց օրինակին հետեւինք առանց մեր հանգանակն երկնցընելու՝ անոր ամբողջութիւնը կը գանենք :

Ըհաւասիկ մեր հանգանակի ծագմանը, ժամանակին, հեղինակին, գործածութեանը եւ կրած արկածներուն վրայօք լրացաւ մեր ըսելքը :

Մի եւ նոյն ատեն կը գոցուի մեր Մսեր Մագիսարոսին հետ ունեցած հաշիւը : Ըլ բացայայտ է որ աս հանգանակէն՝ ուրիշ բան մը Հայաստանի չի վերաբերիր, բայց եթէ անոր մէկ քանի մասանց կորուստը, եւ թէ ասիկայ ան հանգանակը չէ՝ որով մեր Հարքը 487 եւ 587 դարուն վարուեցան, եւ ոչ ալ կրնայ սպառցուցուիլ որ Ա-Պոլսի ըսուած հանգանակն երբեք Հայաստանի մէջ հանդիսական գործածութիւն ունեցած ըլլայ կամ անկէ ինչ ինչ մերինին անցած ըլլայ : Արդէն մեր հանգանակն աս վերջնոյն համազօրն է :

Մեր եղբարքը՝ որոնք Ռուսիա կը գտնուին, կրնան յուսալ որ Աթմնասի պէս մեծ սուրբ Հօր մը անուան պաշտպանութեանը տակ՝ ասկէ ետքը խաղաղաբար իրենց հանգանակը գործածեն : Բայց աս իրաց արդիւնքը բոլորովին ստոյգ չէ : Յունական-Ռուսական հովիւները՝ որոնք կը պնդեն թէ Ափեսոսական Հարք Նիկիական եւ Ա-Պոլսի հանգանակներէն ուրիշ որ եւ իցէ հանգանակի գործածութիւնն արդեւրած են, կրնան աս ալ ըսել որ սոյն